



HFHS Հիվանդի ֆինանսական օժանդակության քաղաքականություն Քաղաքականություն

Սույն HFHS Հիվանդի ֆինանսական օժանդակության քաղաքականությունը («քաղաքականություն») նախատեսված է ֆինանսական աջակցության կարիք ունեցող և Հենրի Ֆորդի առողջապահական համակարգից («HFHS») շտապ և այլ բժշկական օգնություն ստացող հիվանդների ֆինանսական օժանդակության իրավասության հարցերի լուծման համար, և վերաբերում է Հավելված Ա-ում նշված HFHS հաստատություններից յուրաքանչյուրին և նրանց հարակից կլինիկաներին («HFHS հաստատություններ»): Բոլոր ֆինանսական օժանդակությունները ցույց կտան HFHS-ի հանձնառությունը յուրաքանչյուր հիվանդի արժանապատվորեն, հարգանքով և կարեկցանքով վերաբերվելու:

HFHS-ի ծառայություն մատուցողների ցանկը, որոնք ապահովում են շտապ կամ այլ անհրաժեշտ բժշկական օգնություն HFHS հաստատություններում, որոնք ընդգրկված են սույն քաղաքականության մեջ, և որոնք ընդգրկված չեն, պահվում են առանձին HFHS-ի կայքում (henryford.com): HFHS ծառայություն մատուցողների ցանկը կարելի է ձեռք բերել անվճար, ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակով, HFHS կայքից կամ զանգահարելով Հավելված Ա-ում նշված HFHS հաստատություններից որևէ մեկը:

Սահմանումներ.

- **Սովորաբար ներկայացվող հաշիվներ (Amounts Generally Billed, AGB).** նշանակում է այն հաշիվները, որոնք սովորաբար ներկայացվում են շտապ կամ այլ անհրաժեշտ բժշկական օգնության համար այն անձանց, ովքեր ունեն ապահովագրություն այդպիսի բուժօգնության համար:
- **Շտապ բուժօգնություն.** նշանակում է առողջական վիճակի բուժում, որն արտահայտվում է բավական ծանր աստիճանի սուր ախտանիշներով (ներառյալ ուժեղ ցավը), այնպես, որ անհապաղ բժշկական օգնության բացակայությունը հաստատ կարող է ունենալ հետևյալ արդյունքները.
 - Լուրջ վտանգի տակ դնել մարդու (կամ հղի կնոջ, կնոջ կամ նրա չձնված երեխայի առողջությունը) առողջությունը,
 - Մարմնի ֆունկցիաների լուրջ խանգարում, կամ
 - Մարմնի ցանկացած օրգանի կամ մասի լուրջ դիսֆունկցիա, կամ
 - Հղի կնոջ մոտ ցավերի սկսում – (ա) երբ բավականաչափ ժամանակ չկա մինչև ծննդաբերելը անվտանգ տեղափոխման կամ այլ հիվանդանոց տեղափոխելու համար, կամ (բ) այդ տեղափոխումը կարող է վտանգ ներկայացնել կնոջ կամ չձնված երեխայի առողջության կամ անվտանգության համար:
- **Երաշխավոր.** նշանակում է այն անձը, ով հիվանդի հաշիվների համար պատասխանատվություն է կրում:
- **Ընտանիքի եկամուտ.** ներառում է չհարկված եկամուտները, գործազրկության փոխհատուցումը, աշխատողների փոխհատուցումը, սոցիալական ապահովությունը, լրացուցիչ ապահովագրական եկամուտը, հասարակական աջակցությունը, վետերանների վճարները, վերապրածների նպաստները, կենսաթոշակային կամ պաշտոնաթողության եկամուտը, տոկոսները, շահաբաժինները, վարձավճարները, վարձատրությունները, անշարժ գույքից ստացված եկամուտները, փոխառությունները, կրթական օժանդակությունը, ալիմենտը, երեխայի նպաստը, ընտանիքից դուրս օժանդակությունը և այլ տարատեսակ աղբյուրներ: Չի ներառում անկանխիկ նպաստները, ինչպիսիք են՝ պարենային կտրոնները և բնակարանային սուբսիդիաները կամ կապիտալի ձեռքբերումները կամ կորուստները: Եթե անձն ապրում է ընտանիքի հետ, ընտանիքի բոլոր անդամների եկամուտները պետք է ներառվեն (ներառյալ քաղաքացիական ամուսինները), քանի դեռ ընտանիքի անդամները վարձավճար են տալիս և/կամ

տանտերերից անկախ չեն: Ոչ բարեկամները, օրինակ՝ տնակիցները, չպետք է ներառվեն: Կախվածության կարգավիճակը պետք է որոշվի ըստ դեպք առ դեպք սկզբունքի:

- **Յենրի Ֆորդի ֆինանսական օժանդակության կոմիտե.** Կազմված է երեք ղեկավար անդամից, ովքեր նշանակված են Եկամուտների շրջանառության փոխնախագահի կողմից:
- **HFHS ծառայություն մատուցող.** առողջապահության ոլորտի մասնագետ, որն ունի կլինիկական արտոնություններ, որոնք անհրաժեշտ են HFHS հաստատությունում ծառայություններ մատուցելու համար
- **Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ.** համապատասխանում և անհրաժեշտ են ձեր առողջական վիճակի ախտորոշման կամ բուժման համար, տրամադրվում են ձեր առողջական վիճակի ախտորոշման, անմիջական բուժօգնության և բուժման համար, համապատասխանում են ձեր տեղի լավ բժշկական պրակտիկայի ստանդարտներին և հիմնականում ձեր բժշկական ծառայություններ մատուցողի հարմարավետության համար չեն

Ֆինանսական օժանդակության իրավասության չափանիշը.

Սույն քաղաքականության շրջանակներում HFHS ֆինանսական օժանդակության իրավունքը որոշվելու է յուրաքանչյուր հանդիպմանը հետևյալ երեք մեթոդներից մեկով, որը պայմանավորված է՝ անհրաժեշտության դեպքում ակտիվների ստուգումով, ինչպես նկարագրված է ստորև:Այն հիվանդները, որոնք չեն համապատասխանում սույն քաղաքականության շրջանակներում իրավասության չափանիշներին, կարող են այլ ֆինանսական աջակցության իրավունք ունենալ HFHS-ի կողմից առաջարկվող այլ ֆինանսական օգնության ծրագրերի շրջանակներում, ներառյալ համայնքային հիմունքներով իրականացվող տարբեր ծրագրերը:Այս ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք henryford.com կայք:

Այս քաղաքականության շրջանակներում ֆինանսական օժանդակությունը նախատեսվում է օգտագործել որպես վերջին ինստանցիայի վճարող: Նախքան ֆինանսական օժանդակության գեղչի դիտարկումը, HFHS-ը կարող է հիվանդից պահանջել դիմել Medicaid-ի կամ այլ պետական աջակցության ծրագրերի համար:

HFHS-ն իրավունք է վերապահում հետ կանչել ցանկացած ֆինանսական օժանդակության հաստատում, եթե պարզվի, որ դիմումի ներկայացման ընթացքում տրամադրված տեղեկությունները սխալ կամ թերի են եղել:Այս հանգամանքի ծագման դեպքում հիվանդը և/կամ Երաշխավորը կտեղեկացվեն և պատասխանատու կլինեն վճարման համար:

Իրավասության եղանակ (1) – ավանդական.

- Ամերիկայի Միացյալ Նահանգներում մշտական բնակություն
- HFHS-ի առաջնային սպասարկման տարածքներում ունենալով անձնական բնակության վայր, ներառյալ՝ Ուեյն, Մակոմբ, Օուկլենդ և Ջեքսոն վարչաշրջանները: Այն հիվանդների դեպքում, ովքեր դիմում են բուժօգնության համար վերոհիշյալ վարչաշրջաններից դուրս տեղակայված HFHS հաստատություն, հիվանդը կարող է իրավասու լինել ֆինանսական օժանդակության, եթե նրա մշտական բնակության վայրը գտնվում է HFHS հաստատությունից հինգ մղոն շառավիղով տարածքում:
- Ինչպես դիմել HFHS հաստատության HFHS ծառայություն մատուցողին բուժման համար
- Ընտանիքի տարեկան համախառն եկամուտ՝ աղքատության դաշնային մակարդակի («FPL») 400%-ի չափով: Աղքատության դաշնային մակարդակի 250%-ի կամ դրանից պակաս տարեկան համախառն եկամուտ ունեցող հիվանդները կունենան բոլոր անհրաժեշտ բժշկական ծառայությունների 100% գեղչի իրավունք:Աղքատության դաշնային մակարդակի 251-400% տարեկան համախառն եկամուտ ունեցող հիվանդները կունենան մասնակի գեղչի իրավունք:Ծանոթացեք ներքևում գտնվող Սահող սանդղակի աղյուսակներին՝ ապահովագրություն ունեցող և չունեցող հիվանդներին տրվող սահող սանդղակի գեղչերի համար:

Իրավասության եղանակ (2) – աղետալի.

- Հիվանդներ, ովքեր 12 ամիսների ընթացքում կուտակել են մեծ բժշկական պարտք HFHS հաստատությունում՝ աղետալի բժշկական իրավիճակի արդյունքում կատարած գրպանի ծախսերով, որը գերազանցել է իրենց ընտանիքի համախառն տարեկան եկամտի 30%-ը
- Ամերիկայի Միացյալ Նահանգներում մշտական բնակություն
- HFHS-ի առաջնային սպասարկման տարածքներում ունենալով անձնական բնակության վայր, ներառյալ՝ Ուեյն, Մակոմբ, Օուկլենդ և Ջեքսոն վարչաշրջանները: Այն հիվանդների դեպքում, ովքեր դիմում են բուժօգնության համար վերոհիշյալ վարչաշրջաններից դուրս տեղակայված HFHS հաստատություն, հիվանդը կարող է իրավասու լինել ֆինանսական օժանդակության, եթե նրա մշտական բնակության վայրը գտնվում է HFHS հաստատությունից հինգ մղոն շառավղով տարածքում:
- Ինչպես դիմել HFHS հաստատության HFHS ծառայություն մատուցողին բուժման համար:

Հիվանդները, ովքեր կհամապատասխանեն ֆինանսական օժանդակության վերոհիշյալ որակավորմանը, հետևյալ գեղչերի իրավունք կունենան.

- Հիվանդների չմարված բժշկական պարտքը կհարմարեցվի իրենց ընտանիքի եկամտի 30%-ին:
- Այն հիվանդները, ովքեր կհամապատասխանեն ինչպես 1-ին եղանակին, այնպես էլ 2-րդ եղանակին, կստանան երկու գեղչերից առավելագույնը:

Իրավասության եղանակ (3) – ենթադրյալ.

- HFHS-ը կարող է ենթադրյալ հիմունքներով որոշել ֆինանսական օժանդակության որակավորումը՝ օգտագործելով երրորդ կողմերի գնահատականները, համայնքների վրա հիմնված ծրագրերի հղումները և եկամտի հիման վրա կառավարության ծրագրերի հաստատումները:
- Այն հիվանդները, ովքեր համապատասխանում են ֆինանսական օժանդակության ենթադրյալ որակավորմանը, կարող են իրավասու լինել մասնակի գեղչի կամ 100% ամբողջական գեղչի համար՝ շտապ և այլ անհրաժեշտ բուժօգնության դեպքում: Աղքատության դաշնային մակարդակի 250%-ի կամ դրանից պակաս տարեկան համախառն եկամուտ ունեցող հիվանդները կունենան բոլոր անհրաժեշտ բժշկական ծառայությունների 100% գեղչի իրավունք: Աղքատության դաշնային մակարդակի 251-400% տարեկան համախառն եկամուտ ունեցող հիվանդները կունենան մասնակի գեղչի իրավունք: Ծանոթացեք ներքևում գտնվող Սահող գեղչերի արյունակների՝ ապահովագրություն ունեցող և չունեցող հիվանդներին տրվող սահող սանդղակի գեղչերի համար:

Ֆինանսական օժանդակության համար իրավասու հիվանդների հաշվեկշիռները

Սույն քաղաքականության շրջանակներում ֆինանսական օժանդակության գեղչի համար իրավասու հիվանդների հաշվեկշիռները կարող են ներառել, բայց չսահմանափակվել.

- Համատեղ ապահովագրության, պահումների և համավճարների գումարները
- Վճարները առողջապահական ծրագրի ապահովագրություն ունեցող հիվանդների համար, ովքեր չունեն պայմանագրային հարաբերություն HFHS-ի հետ, կամ երբ HFHS-ի ծառայություն մատուցողը չի մտնում առողջապահական ծրագրի ցանցի մեջ:
- Վճարները ապահովագրություն ունեցող հիվանդների համար, ովքեր սպառել են իրենց նպաստները,
- Առևտրային, Medicare կամ Medicaid ծրագրերի շրջանակներում ընդգրկված հիվանդներին մատուցվող չապահովագրված ծառայությունների վճարները
- Առևտրային, Medicare կամ Medicaid ծրագրերի շրջանակներում իրենց մնալու տևողությունը գերազանցած հիվանդների համար վճարները

Այս քաղաքականության մեջ նշված ֆինանսական օժանդակությունը մեր Ապահովագրություն չունեցողների գեղջի քաղաքականության մեջ սահմանված ապահովագրություն չունեցողների գեղջի հավելումն է, որը կարելի է խնդրել՝ գանգահարելով Ֆինանսական օժանդակության թիմին (313) 874-7800 հեռախոսահամարով:

Սահող սանդղակի գեղջեղի աղյուսակներ.

Ապահովագրություն չունեցող հիվանդներ.

FPL-ի 400%-ից պակաս եկամուտ ունեցող ապահովագրություն չունեցող հիվանդներին որակավորելու համար հիվանդի պատասխանատվությունը կարգավորվում է Medicare-ի թույլատրելի գումարի տոկոսի վրա՝ ստորև բերված աղյուսակի հիման վրա:

Ընտանիքի եկամուտը	Medicare-ի սակագնի %-ը
FPL-ի 350%-400%-ը	91%
FPL-ի 300%-350%-ը	61%
FPL-ի 250%-300%-ը	30%
FPL-ի <250%	0%

Ապահովագրություն չունեցող համապատասխան հիվանդներին, ում եկամուտը 250%-ից ցածր է, տրվում է 100% գեղջ

Ապահովագրություն ունեցող հիվանդներ.

Ապահովագրություն ունեցող համապատասխան հիվանդների դեպքում, ում եկամուտը FPL-ի 400%-ից ցածր է, հիվանդի պատասխանատվությունը գեղջվում է ստորև բերված աղյուսակի հիման վրա

Ընտանիքի եկամուտը	Պարտավորված հաշվեկշռի գեղջը
FPL-ի 350%-400%-ը	25%
FPL-ի 300%-350%-ը	50%
FPL-ի 250%-300%-ը	75%
FPL-ի <250%	100%

Գույքի ստուգում.

Հիվանդի ֆինանսական օժանդակության իրավասությունը որոշելու համար HFHS-ն օգտագործում է սահող սանդղակի գեղջը, ինչը հաշվի է առնում հիվանդի Ընտանիքի եկամուտը և համապատասխան գույքը:

Սույն քաղաքականության համաձայն հիվանդը իրավասու չէ ֆինանսական օժանդակության, եթե հիվանդի ընտանիքի գույքը գնահատվում են \$100,000 կամ ավելի՝ անկախ հիվանդի եկամտից: Որպես պաշտպանված գույք չնշված գույքը հաշվի է առնվելու բժշկական ծախսերը վճարելու համար: HFHS-ը կարող է հասանելի գույքի ավելցուկը համարել որպես ընթացիկ տարվա եկամուտ՝ հիվանդին առաջարկվող գեղջի մակարդակը սահմանելիս:

Պաշտպանված գույք.

- Մեկ հիմնական սեփական կապիտալի առաջին \$1,000,000-ի 100% և դրանից հետո՝ հիմնական կապիտալի սեփականության 50%
- IRA, 401k, կանխիկ արժեքով կենսաթոշակային ծրագրեր/կենսաթոշակներ
- Բիզնեսում օգտագործված ողջամիտ ակտիվներ
- Անձնական սեփականություն
- Զուլեջի խնայողական ծրագրեր

Ֆինանսական օժանդակության համար իրավասություն չունեցող հիվանդները.

Սույն քաղաքականության կամ HFHS-ի կողմից առաջարկվող ֆինանսական օժանդակության հասանելի այլ ծրագրերի շրջանակներում ապահովագրություն չունեցող հիվանդները, ովքեր չեն համապատասխանում ֆինանսական օժանդակության չափանիշներին, կվճարեն ծառայության համար՝ ըստ ապահովագրություն չունեցողների գեղջի դրույքաչափի: Լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթացեք ապահովագրություն չունեցողների գեղջի դրույքաչափի կանոններին՝ <https://www.henryford.com/visitors/billing>:

Հիվանդը կարող է բողոքարկել իր ֆինանսական օժանդակության դիմումի մերժումը՝ գրելով Հենրի Ֆորդի ֆինանսական օժանդակության կոմիտեին՝ HFHS հաստատությունում մերժում ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Ֆինանսական օժանդակության իրավասությունը ենթակա է HFHS-ի եկամուտների շրջանառության կառավարման կողմից հաստատմանը՝ կլինիկական բուժօգնության թիմերի հետ գործընկերությամբ:

Կարող են բացառություններ արվել՝ որպես հատուկ հանգամանքների երաշխիք: Նման բացառությունները կդիտարկվեն դեպք առ դեպք սկզբունքի հիման վրա: Կրկն ցանկացած բացառություն չի ենթադրում քաղաքականության մեջ փոփոխություն, ինչպես նաև չի երաշխավորում, որ միևնույն որոշումը կկայացվի ապագայում: Ֆինանսական օժանդակության դիմումի հետ կապված լրացուցիչ հարցեր ունենալու դեպքում հիվանդները կարող են կապվել մեզ հետ **(313) 874-7800** հեռախոսահամարով կամ հետևյալ էլ. հասցեով՝ financialassistanceapp@hfhs.org:

Ֆինանսական օժանդակության իրավասություն ունեցող հիվանդների վճարների սահմանափակումներ

Ֆինանսական օժանդակության իրավասություն ունեցող հիվանդները չեն վճարի շտապ և այլ անհրաժեշտ բուժօգնության համար նախատեսված AGB-ը, և ոչ ավելի, քան մնացած բոլոր բժշկական օգնության համախառն վճարները: Յուրաքանչյուր HFHS հաստատություն օգտագործում է հետահայաց անալիզի մեթոդը՝ մեկ կամ մի քանի AGB-ի տոկոսները հաշվելու համար: AGB-ի տոկոսը հաշվարկվում է բաժանելով Medicare-ի բոլոր վճարովի ծառայությունների և մասնավոր առողջապահական ապահովագրության ընկերությունների հանրագումարը, որոնք 12 ամսվա ընթացքում HFHS հաստատությանը վճարել են հայցերը, այդ հայցերի հետ կապված համախառն վճարների հանրագումարի վրա:

Ինչպես դիմել ֆինանսական օժանդակության համար.

Հիվանդները և/կամ երաշխավորները կարող են ֆինանսական օժանդակության դիմել՝ HFHS-ի կողմից հիվանդին և/կամ երաշխավորին նախնական վճարման չեքի տրամադրումից մինչև 240 օր հետո ցանկացած ժամանակ: HFHS-ն, իր հերթին, կդիտարկի դիմումը և որակավորումը կորոշի իրավասությունը՝ լրացված դիմումը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: Անհատը որոշման և որոշման հիմնավորման մասին կծանուցվի գրավոր կերպով:

Ֆինանսական օժանդակության իրավունք ստանալու համար անհրաժեշտ է, որ հիվանդը / Երաշխավորը լրացնի Հիվանդի ֆինանսական օժանդակության դիմումը: Դիմումը հասանելի է HFHS-ի ֆինանսական օժանդակության կայքում՝ <https://www.henryford.com/visitors/billing/financial-assistance>: Հիվանդը կարող է լրացված դիմումը անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին ուղարկել փոստով կամ ֆաքսով HFHS հաստատություն, որտեղ դիմում է բուժման համար՝ հաստատման

համար: HFHS հաստատության հասցեի և ֆաքսի համարների համար խնդրում ենք անդրադառնալ
Հավելված Ա-ին:

Եթե հիվանդը չի կարողանում ներբեռնել դիմումը HFHS կայքից, խնդրում ենք ծանոթանալ Հավելված
Ա-ին, որպեսզի խնդրեք դիմումի թղթային տարբերակը, որը փոստով կուղարկվի հիվանդի
բնակավայր: Դիմումը տարբեր լեզուներով կարող եք գտնել՝ անցնելով հետևյալ հղումով՝
<https://www.henryford.com/visitors/billing/financial-assistance/documents>:

Եթե հիվանդը հարցեր ունի իր դիմումի և/կամ օգնության կարիք ունի դիմումը լրացնելու հետ
կապված, խնդրում ենք ծանոթանալ Հավելված Ա-ին, որպեսզի կապվեք HFHS հաստատության հետ,
որտեղ հիվանդը ստանում է բուժումը:

Պահանջվող փաստաթղթերի թվում կարող են լինել.

- Եկամտահարկի դաշնային հայտարարագիրը վերջին հարկային տարվա համար (Ձև 1040),
ներառյալ բոլոր կիրառելի ժամանակացույցերը
- Աշխատավարձի և հարկային ամենավերջին հայտարարագրերը (Ձև W-2) և/կամ Այլ
եկամուտը (Ձև 1099)
- Ընտանիքի յուրաքանչյուր անդամի վերջին 2 ամսվա աշխատավարձի ստացականների
պատճենը՝ տարվա սկզբից առ այսօր եկամուտներով, կամ համախառն աշխատավարձերը
հաստատող տեղեկանք գործատուից
- Այլ եկամուտը հաստատող փաստաթղթեր (օր.՝ վարձակալության տրվող գույք և այլն)
- Վերջին 2 ամսվա չեկային գործարքների/խնայողությունների բանկային քաղվածքների
պատճենը
- Միջիգանի վավեր վարորդական իրավունքի վկայականի կամ Միջիգան նահանգի
նույնականացման քարտի պատճենը
- Անհրաժեշտության դեպքում՝ Medicaid-ի, Healthy Michigan-ի կամ Marketplace-ի մերժման
պատասխանը և/կամ COBRA-ի փաստաթղթերը
- Ֆինանսական անհրաժեշտության անձնական հայտարարություն հիվանդից

HFHS-ն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, եթե եկամտի հետագա
ստուգման և/կամ պարզաբանումների կարիք լինի՝ տրամադրված օժանդակ փաստաթղթերի հիման
վրա: HFHS-ը չի կարող մերժել ֆինանսական օժանդակությունը՝ դիմումատուի կողմից
փաստաթղթերի չտրամադրելու հիման վրա, որոնք հստակորեն չեն պահանջվում սույն
Քաղաքականությամբ կամ Ֆինանսական օժանդակության դիմումով:

Հաշիվների ներկայացում և հավաքագրումներ.

Հաշիվների ներկայացման և հավաքագրման գործողությունները, որոնք կարող են ձեռնարկվել HFHS-
ի կողմից չվճարման համար, նկարագրված են առանձին՝ հիվանդի հաշիվների ներկայացման և
հավաքագրման քաղաքականության մեջ, որը կարելի է անվճար ձեռք բերել ֆինանսական
օժանդակության թիմից՝ գանգահարելով (313) 874-7800 համարով կամ Henry Ford Health System-ի
կայքից՝ www.henryford.com:

Հավելված Ա.

Խնդրում ենք փաստաթղթերն ուղարկել այն հաստատություն, որտեղ ստացել եք բուժօգնությունը.

Հաստատություն	Հասցե	Հեռախոսի/Ֆաքսի համար/Էլ. փոստ
Henry Ford Allegiance Health Hospitals	Henry Ford Allegiance Health Department 64787 Drawer 64000 Detroit, MI 48264	Հեռախոս. (517) 205-4920
Henry Ford Hospital and Medical Centers	Henry Ford Hospital Patient Financial Assistance Planning Office 2799 West Grand Blvd. K-1, West 107 Clinic Building Detroit, MI 48202	Հեռախոս. (313) 916-4510 Ֆաքս. (313) 916-4501
Henry Ford Kingswood Hospital & Henry Ford Maplegrove Center	Behavioral Health Services Attn: BHS Revenue Services 1 Ford Place, Room 1F111 Detroit, MI 48202	Հեռախոս. (313) 874-9501 Ֆաքս. (313) 874-6895
Henry Ford Macomb Hospitals	Henry Ford Macomb Hospital Attn: Financial Support 15855 19 Mile Rd. Clinton Township, MI 48038	Հեռախոս. (586) 263-2696 Ֆաքս. (586) 263-2697
Henry Ford West Bloomfield Hospital	Henry Ford West Bloomfield Hospital Attn: Revenue Services 6777 West Maple West Bloomfield, MI 48322	Հեռախոս. (248) 325-0201 Ֆաքս. (248) 325-0235
Henry Ford Wyandotte Hospital & Henry Ford Medical Center - Brownstown	Henry Ford Wyandotte Hospital Attn: Hospital Patient Financial Assistance Programs 2333 Biddle Ave. Wyandotte, MI 48192	Հեռախոս. (734) 916-4501 Ֆաքս. (734) 246-7926
Henry Ford Health System Corporate Business Office		Հեռախոս. (313) 874-7800 Էլ. փոստ. financialassistanceapp@hfhs.org